ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2021 թվականի N 463-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԷԼԼԱ ՇԱՀԲԱԶՅԱՆ ԼԵՎՈՆԻ»-Ի ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Էլլա Շահբազյան Լևոնի»-ի 2021 թվականի օգոստոսի 16-ի N2 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N97-Ն որոշման հավելված 1-ի 10-րդ կետի ա) ենթակետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Շահումյան փողոց, շենք 5/31 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Էլլա Շահբազյան Լևոնի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի առաջին, երկրորդ, երրորդ եռամսյակների համար համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. օգոստոսի 16
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2021 թվականի N 464-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ և 60-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06 053 0013 0016 կադաստրային ծածկագիր, 0.00417 հա նոր առաջացող գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Կաթնառատ, 1-ին փողոց, թիվ 2/2 հողամաս հասցեն (փոստային դասիչ՝ 2108):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 16
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2021 թվականի N 465-Ա

## ՄԽԻԹԱՐ ՂԵՎՈՆԴՅԱՆԻՑ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Լոռու մարզի տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկանՔաղաքացի Մխիթար Ղևոնդյանը (հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, Տաշիր համայնք,Սարատովկա գյուղ,Գետավան, փողոց 1, տուն 17, նույնականացման քարտ՝ 001155092, տրված՝ 24.03.2014-ին, 039 բաժնի կողմից, ՀԾՀ՝ 2710710013), հանդիսանալով հարկվող օբյեկտի վարձակալ, չի կատարել հողի վարձակալության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել հողի վարձակալության վճարները: Արդյունքում 2021 թվականի հուլիսի 16-ի դրությամբ հողի վարձակալության պարտքը կազմում է 167 . 811 (հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր տասնմեկ ) ՀՀ դրամ, որից 156 . 321 (հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ,տույժ՝ 11 . 490(տասնմեկ հազար չորս հարյուր իննսուն) ՀՀ դրամ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական , վարույթի շրջանակներում 2021 թվականի օգոստոսի 16-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել քաղաքացի Մխիթար Ղրոնդյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 11.08.2020) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի Մխիթար Ղևոնդյանը բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները: Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի

համաձայն՝ հողամասի օգտագործողները պարտավոր են ժամանակին կատարել հողամասերի համար վճարումները: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ)օգտագործմանը հանձնել գույք,նույն օրենսգրքի 616-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճար(վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետը որոշվում են վարձակալության պայմանագրով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ,110-րդ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ,616-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1 . Քաղաքացի Մխիթար Ղևոնդյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 167 . 811՝ (հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր տասնմեկ ) ՀՀ դրամ, որից 156 . 321 (հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ,տույժ՝ 11 . 490(տասնմեկ հազար չորս հարյուր իննսուն) ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին՝ չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275099043 հաշվեհամարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. օգոստոսի 16
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Մարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2021 թվականի N 466-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ) ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Հերմինե Վլադիմիրի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 03112018-06-0026, տրված՝ 03.11.2018-ին) Լոռու մարզ, համայնք Տաշիր, ք. Տաշիր, 1-ին թաղամաս, Կ.Դեմիրճյան փողոց, 18 բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ.Դեմիրճյան փողոց, թիվ 18 բնակելի տուն (2101 փաստային դասիչ ) հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. օգոստոսի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2021 թվականի N 467-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն թվականի օգոստոսի 18- ին գումարել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 18-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում հողագրունտի հանույթի շխատանքներ իրականացնելուն համաձայնություն տալու և հողագրունտի մեկ խորանարդ մետրի արժեքը սահմանելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող անշարժ գույքը աճուրդով օտարելու մասին:

4. Գույքահարկի գծո արտոնությունն սահմանելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2021 թվականի N 468-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-008-0094-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վարդուհի Հակոբի Մանուկյանի (նույնականացման քարտ՝ 012813671, տրված 22.06.2020թ.) ՄԴ-373-21 դիմումը ( մուտք՝ 29.07.2021-ին, ՄԴ-373 ), 1990 թվականի հուլիսի 30-ի Կալինինոյի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նիստի թիվ 7 արձանագրությունից քաղվածքը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ժառանգության իրավունքի վկայագրերը՝ (նոտարական ակտի կոդեր՝ 595-20210706-84-5213129, 595-20210706-84-5212874, 595-20210706-84-5213134), նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0,05789 հա հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Վարդուհի Հակոբի Աննա Էդիկի և Տարոն Էդիկի Մանուկյանների համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Մուշ բնակելի զանգված, 3-րդ փողոց թիվ 32 հասցեում գտնվող, 06-008-0094-0004 կադաստրային ծածկագրով 0,05789 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծով:
3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2021 թվականի N 469-Ա

## ՍԵՄՅՈՆ ՇԱՀԵՆԻ ԱԶԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 25-ի N97-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սեմյոն Շահենի Ազարյանի դիմումը (մուտք՝ 18.08.2021-ի, ՍԴ 405-21)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Սեմյոն Շահենի Ազարյանին տալ ավտոտնակի կառուցման շինարարության թույլտվություն:
2.Սեմյոն Շահենի Ազարյանին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3.Սեմյոն Շահենի Ազարյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2021 թվականի N 470-Ա

## « ԼԵՈՊՈԼԴ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՀԱՆՈՒՅԹԻ ՏԵՂԱՄԱՍ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության N286 որոշումով հաստատված՝ կարգի 44-րդ կետի «ժգ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվակնի մայիսի 10-ի «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» N 572-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում հողագրունտի հանույթի աշխատանքներ իրականացնելուն համաձայնություն տալու և հողագրունտի մեկ խորանարդ մետրի արժեքը սահմանելու մասին » N73-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՍ՝

1. «Լեոպաոլդ և ընկերներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող, 06-081-0113-0033 կադաստրային ծածկագրով, 4.464976 հա մակերեսով հողագրունտի հանույթի տեղամաս հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի վարձակալությամբ օգտագործման տրամադրելու մասին նախնական պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2021 թվականի N 471-Ա

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/91» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հուլիսի 26-ի N3 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ԷՓԼԴԵՎԳԵՅՄ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԷՓԼԴԵՎԳԵՅՄ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/91» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2021 թվականի N 472-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 458-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 12-ի «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու, հողամասի իրացեվորման և Լոռու մարզ, Տաշիր համայնքի ղեկավարի 2021 թվականի մայիսի 25-ի N 315-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 458-Ա որոշման 1-ին կետի « 06-008-0287-0001» թիվը փոխարինել «06-008-0278-0001» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2021 թվականի N 473-Ա

## ՀՈՂՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՈԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումով հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1055-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետը, 50-րդ և 60-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-008-0253-0018 կադաստրային ծածկագրով բնակավայրերի այլ հողեր 1.27513 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:

2.Հողամասի սահմանները որոշվում են «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 355/6 հողամաս (փոստային դասիչ՝ 2101):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2021 թվականի N 474-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ) ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Սարգիս Գևորգի, Վարդուհի Սարգսի, Արտակ Սարգսի, Նունե Սարգսի Նազարյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 1768209, տրված՝ 16.06.2003-ին) Լոռու մարզ, Լեռնահովիտ համայնք, բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, 11-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 1 բնակելի տուն (2107՝ փոստային դասիչ ) հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. օգոստոսի 20
ք.Տաշիր